ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ

Հոկտեմբերի 25—29-ը Երևանում տեղի ունեցավ ՍՍՌՄ, Հայկական, Վրացական և Ադրբեջանական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Գիտությունների ակադեմիաների միացյալ գիտական սեսիան՝ նվիրված Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորման 40-ամյակին։

Սեսիայի աշխատանքներին մասնակցում էին ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի անվանի գիտնականներից բաղկացած պատգամավորություն, Ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ա. Ն. Նեսմեյանովի գլխավորությամբ, Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պատգամավորություն, Ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ն. Ի. Մուսխելիշվիլու գլխավորությամբ, Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պատգամավորություն, Ակադեմիայի պրեզիդենտ, ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ Յու. Հ. Մամեդալիևի գլխավորությամբ, Ուկրաինական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պատգամավորություն, Ակադեմիայի գլխավոր գիտական քարտուղար Ի. Ֆեդորչենկոյի գլխավորությամբ, Լիտվական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պատգամավորություն, Ակադեմիայի պրեզիդենտ, ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ Յու. Յու. Մատուլիսի գլխավորությամբ, Թուրքմենական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պատգամավորություն, Ակադեմիայի փոխ-պրեզիդենտ Ք. Մաշրիկովի գլխավորությամբ, Լատվիական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պատգամավորություն, ԳԱ ակադեմիկոս Ա. Ք. Մալմեյստերի և Էստոնական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պատգամավորություն, ակադեմիկոս-քարտուղար Ի. Խեյլի գլխավորությամբ։

Չորս ակադեմիաների միացյալ գիտական սեսիայի պլենար նիստում՝ հոկտեմբերի 25-ին ողջույնի ճառով սեսիայի մասնակիցներին դիմեցին Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ա. Ն. Նեսմեյանով, Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ն. Ի. Մուսխելիշվիլին, Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ պրեզիդենտ Յու. Հ. Մամեդալիևը, Ուկրաինական, Թուրքմենական, Էստոնական, Լիտվական ՍՍՌ Գիտությունների ակադեմիաների պատգամավորությունների ղեկավարները, Ադրբեջանական ՍՍՌ Դերագույն Սովետի նախագահ, հին բոլշևիկ Ալի Թաղի Զադեն։

Բոլոր ելույթ ունեցողները բարձր գնահատեցին Հայաստանի գիտնականների ավանդը սովետական առաջավոր գիտության մեջ։

«Ընդամենը 40 տարի է անցել Հայաստանում Սովետական իշխանության հաստատումից հետո,— իր ելույթում ասաց ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ա. Ն. Նեսմեյանովը,— բայց նա այդ կարճ ժամանակամիջոցում ինչպե՞ս է վերափոխվել։ Մենք հենց նոր մի քիչ կարողացանք ծանոթանալ Ձեր ռեսպուբլիկային, բայց այդ էլ միանգամայն բավական էր, որ տեսնենք և գնահատենք Ձեր հաջողություններդ։ գլուխ խոնարհենք հայ ժողովրդի ստեղծագործական հանճարի հանդեպ։

Այժմ Ձեզ մոտ աշխատում է շատ որակյալ ինտելիգենցիայի մի մեծ բանակ, որը գործում է գիտության, տեխնիկայի, բժշկության, մանկավարժության բնագավառներում։ Եթե անդրադառնալու լիներք Հայաստանի գիտության, ամբողջությամբ վերցրած նրա կուլտուրային, ապա մենք բոլորս քաջ գիտենք, թե որքան բարձր է հնչում հայ ժողովրդի ձայնը մեր սոցիալիստական Հայրենիքի բազմազան կուլտուրայի հուժկու խմբերգում։

Հայ գիտնականներն ու մասնագետները արդյունավետ կերպով աշխատում են ոչ միայն իրենց ռեսպուբլիկայում, նրանք բեղմնավոր աշխատանք են կատարում Մոսկվայում, Լենինգրադում և գիտության այլ կենտրոններում։

Ես չափազանց կարևոր եմ համարում այն, որ միութենական ռեսպուբլիկաների Գիտությունների ակադեմիաները և ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիան չկրկնեն միմյանց, այլ

գործեն այնպես, որ միասին կազմեն մի հզոր նվագախումբ, որտեղ ներկայացված լինեն բոլոր գործիքները։

Այդ տեսակետից Հայաստանի ակադեմիան լավ օրինակ կարող է ծառայել։ Իրոք, այստեղ յուրաքանչյուր ուղղություն ինքնատիպ է, և դրանցից ոչ մեկը երբեվ չի կրկնվում։ Պետք է արդարամտորեն ասել, որ Հայաստանը արժեքավոր շատ բան է ներդրել հայրենական գիտության մեջ»։

Այնուհետև ակադեմիկոս Ա. Ն. Նեսմեյանովը կանգ է առնում աստրոֆիզիկայի, ֆիզիկայի, նուրբ օրգանական բիմիայի, մաթեմատիկայի և մեխանիկայի բնագավառներում աշխատող հայ գիտնականների նվաճումների վրա, նշելով, որ այդ ճյուղերի գծով Հայաստանի ակադեմիան ամենաառաջավոր դիրքերում է։

Նույն նիստում գիտության մի շարք ճյուղերի նվաճումների մասին համառոտ զեկույցներով հանդես եկան էլեկտրատեխնիկայի ինստիտուտի դիրեկտոր, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Տ. Ադոնցը, Ֆիզիկայի ինստիտուտի դիրեկտոր, Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Ի. Ալիխանյանը, Նուրբ օրգանական բիմիայի ինստիտուտի դիրեկտոր, Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանը, Բյուրականի աստղադիտարանի դիրեկտորի գիտական գծով տեղակալ Լ. Վ. Միրզոյանը, Հայաստանի Ժողտնտխորհի Քիմիայի ինստիտուտի դիրեկտոր, Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Մ. Գ. Մանվելյանը և ուրիշներ։

Պլենար նիստում մեծ ուշադրությամբ լսվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի զեկուցումը «Սովետական Հայաստանի գիտությունը 40 տարում» թեմայով։

Ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը հանդամանորեն կանգ առավ Հայաստանում գիտության զարգացման առանձին ճյուղերի վրա, մատնանշելով, որ եթե Սովետական Հայաստանի գոյության առաջին բանամյակում ռեսպուբլիկայում սկիզբ առավ գիտությունը՝ իր արդի ձևերով, երևան եկան որակյալ կադրեր և ձեռք բերվեցին առաջին հաջողությունները հետազոտական աշխատանքում, ապա հաջորդ բանամյակում Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության հարատև հոգատարության և խոր հետազոտական աշխատանքի շնորհիվ մի շարք բնագավառներում այն սկսեց մոտենալ համաշխարհային գիտության բարձր մակարդակին, սովետական գիտության համար արժանավայել միակ մակարդակին։

Խոսելով ֆիզիկա-մաթեմատիկական, տեխնիկական, բիոլոգիական, բժշկական և գիտության այլ ճյուղերի բնագավառում ձեռք բերված նվաճումների մասին, տալով շատ արժեքավոր աշխատանքների մեծ ժողովրդա-տնտեսական նշանակություններ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը զեկուցման մեջ կգալի տեղ հատկացրեց նաև հասարակական գիտությունների բնագավառում կատարված աշխատանքներին։

Զեկուցողը արժանի գնահատական է տալիս ականավոր գիտնականներ, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի իսկական անդամներ Հրաչյա Աճառյանի, Ստեփանոս Մալխասյանցի, Մանուկ Աբեղյանի, Հակոբ Մանանդյանի և մյուսների՝ հայագիտության բնագավառում կատարած աշխատանքներին, նշում, որ նրանց գործունեության արդյունքները դուրս են գալիս հայագիտության սահմաններից։

Վ. Հ. Համբարձումյանը նշում է, որ մի ժամանակ ռեսպուբլիկայի հասարակական գիտությունների աշխատողների շրջանում տարածվել էր այն սխալ կարծիքը, թե որի այդ գիտությունների ասպարեզում աշխատողները պետք է սահմանափակվեն միայն կամ գլխավորապես հայագիտությամբ։ Դա նշանակում էր գնալ նվազագույն դժվարությունների ճանապարհով, քանի որ մեկանում հայագիտության բնագավառում կան պատրաստի տրադիցիաներ և կադրեր։ Սակայն ռեսպուբլիկայի բուռն կերպով զարգացող տնտեսությունը — ասում է զեկուցողը,— պահանջում էր ընդլայնել հետազոտությունները սոցիալիստական արդյունաբերության և գյուղատնտեսության էկոնոմիկայի բնագավառում։ Մասնավորապես հաջողությամբ մշակվեցին կոնկրետ էկոնոմիկայի մի շարք հարցեր, երևան եկան առաջին հետազոտությունները արևելագիտության և փիլիսոփայության վերաբերյալ։ Արժեքավոր գործեր ստեղծվեցին հայ-ռուսական հարաբերությունների բնագավառում, հիանալի արդյունքներ տվեցին հնագետների ուսումնասիրությունները, որոնք մեծ նշանակություն ունեն ոչ միայն հայագիտության, այլև ամբողջ Հին Արևելքի պատմության համար։ Հայ արվեստի պատմությունն ուսումնասիրողները ուշադրություն սևեռեցին ժամանակակից կիրառական արվեստի, ժամանակակից սովետական ճարտարապետության հարցերին։

Այս ամենը ոչ միայն չի նվազեցրել հայագիտական աշխատանքների նշանակությունը,— եզրակացնում է ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը,— այլև, ընդհակառակը, հասցրել է հայագիտության բոլոր բնագավառների, այդ թվում՝ Հայաստանի պատմության, հայոց լեզվի

և նրա բազմաթիվ բարբառների, հայ գրականության և արվեստի ուսումնասիրության իսկական ծաղկմանը։ Եթե անցյալում հայագիտության ասպարեզում արտասահմանում կատարված աշխատանքները մի ինչ-որ չափով մրցակցում էին բուն Հայաստանում հայագետների հետազոտությունների հետ, ապա այժմ արտասահմանում կատարվում է հայագիտական հետազոտությունների միայն աննշան մասը։

Բազմաթիվ հետաքրքրական հարցեր արծարծվեցին ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի, Հայկական, Վրացական և Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիաների գիտնականների այդ մեծ համաժողովի սեկցիոն նիստերում։

Չորս օր տևեցին ֆիզիկայի և աստղագիտության, մաթեմատիկայի և մեխանիկայի, տեխնիկական, երկրաբանական, քիմիական, բիոլոգիական, բժշկա-կենսաբանական, պատմական, տնտեսագիտական և փիլիսոփայական գիտությունների, գրականության և լեզվի սեկցիաների աշխատանքները։

Տասը սեկցիաների նիստերում, որոնք անցան երկրի անվանի գիտնականների մասնակցությամբ, լսվեց մոտավորապես 150 զեկուցում և հաղորդում։ Զեկուցումներով հանդես եկան շատ անվանի գիտնականներ, այդ թվում 73 ակադեմիկոս և թղթակից-անդամ։

Ֆիզիկայի և աստղագիտության սեկցիայում մեծ հետաքրքրությամբ լսվեցին և քննարկվեցին Պուլկովոյի աստղադիտարանի դիրեկտոր, ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ա. Միխայլովի զեկուցումը՝ «Լուսնի շերեսացող կողմը», ակադեմիկոս Ա. Ի. Ալիխանովի և նրա մի խումբ աշխատակիցների զեկուցումը՝ «Էլեկտրոնների բևեռացման չափումները 198 ռադիոակտիվ ոսկու բետատրոհման ժամանակ», Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Ի. Ալիխանյանի զեկուցումը՝ «Ռենտգենանային ճառագայթը պարբերական փուլերում և բարձր էներգիայի մասնիկների էներգիայի չափումը», Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Ա. Հակոբյանի զեկուցումը՝ «Հավասարակշռության տեղափոխման օրենքների մասին», ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու Ռ. Ն. Մարգարյանի զեկուցումը «Արտաքին գալակտիկաների բնակչության բնույթի մասին» և այլ զեկուցումներ։

Մաթեմատիկայի և մեխանիկայի սեկցիայում, որտեղ լսվեց և քննարկվեց 13 զեկուցում, մեծ հետաքրքրություն առաջացրեցին Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ն. Խ. Հարությունյանի զեկուցումը՝ «Սողքի տեսության կոնտակտային խնդիրները», պրոֆեսոր Ա. Ի. Կալանդիայի զեկուցումը՝ «Կիսաշրջանի համար առաձգականության տեսության խնդրի լուծման մի եղանակի մասին», ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ, Լենինյան մրցանակի լաուրեատ Ա. Ա. Իլյուշինի զեկուցումը՝ «Առաձգականության ընդհանուր մաթեմատիկական տեսության հիմնական պոստուլատները», Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Լ. Շահինյանի, Մ. Մ. Ջրբաշյանի, Ս. Ն. Մերգելյանի զեկուցումները։ Սեկցիայի աշխատանքները ղեկավարում էր Վրաստանի Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ն. Ի. Մուսխելիշվիլին։

Տեխնիկական գիտությունների սեկցիայում քննարկվեցին երեք կարգի հարցեր. նվիրված բարձրավոլտ էլեկտրատեխնիկայի, Սևանա լճի մակարդակի պահպանման, մետաղագիտության և լեռնահանքային արդյունաբերության պրոբլեմներին։ Այստեղ մեծ հետաքրքրություն առաջացրեց ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ Վ. Մ. Պոպկովի զեկուցումը՝ «Բարձրավոլտ էլեկտրական պարպման վարման հարցեր», Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Լ. Վ. Ալեքսանդրովի զեկուցումը՝ «Բարձր հաճախություն ունեցող սինխրոն գեներատորների կոնստրուկցիայի որոշ առանձնահատկություններ», Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ա. Էֆենդիզադեի զեկուցումը՝ «Հայաստանի և Ադրբեջանի էներգետիկ սիստեմների կապը միացյալ էներգոսիստեմների կովկասյան սեկցիայում», պրոֆեսոր Հ. Տ. Ադոնցի զեկուցումը՝ «Անդրկովկասյան էներգետիկ սիստեմի կայունության հետազոտության արդյունքները», Վրացական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ֆ. Ն. Թավաձեի, Վրացական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Կ. Ս. Զավրիևի զեկուցումները։

Բարձր մակարդակով անցան երկրաբանական գիտությունների սեկցիայի աշխատանքները։ Սեկցիայում զեկուցումներով հանդես եկան ՍՍՌՄ ԳԱ Երկրաբանա-քիմիական ինստիտուտի դիրեկտոր, ակադեմիկոս Ա. Պ. Վինոգրադովը, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Երկրաբանա-աշխարհագրական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Դ. Ի. Շչերբակովը, Վրացական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Ն. Ջավախիշվիլին, Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոսներ Մ. Ա. Կաշկայը, Շ. Ա. Ազիզբեկովը, ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ Գ. Դ. Աֆանասևը, Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոսներ Հ. Գ. Մադաբյանը, Ս. Ս. Մկրտչյանը և ուրիշներ։ Այստեղ քննարկվող հարցերը նվիրված էին երկրի կեղևի կառուցվածքի, նրա ճանաչելիության և ձևավորման, առանձին գոտիների երկրաբանական կառուցվածքի և մետալոգենիայի, Կովկասի ֆիզիկական աշխարհագրության պրոբլեմներին։

Քիմիական գիտությունների սեկցիայում 12 զեկուցումներից 6-ը կարդացին Մոսկվայի, Վրաստանի և Ադրբեջանի գիտնականները։ Մեծ հետաքրքրությամբ լսվեցին ակադեմիկոս Ս. Ս. Դուբինինի զեկուցումը՝ «Ֆիզիկական ադսորբցիայի տեսությունը և ադսորբենտների գործնական կիրառությունը», Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ռ. Նալբանդյանի, պրոֆեսոր Պ. Վ. Գոգորիշվիլու և այլ զեկուցումները։ Նոր արժեք էր ներկայացնում ակադեմիկոս Ռ. Լ. Կնունյանցի զեկուցումը՝ «Նոր կանցերոլիտիկ պեպտիտներ» թեմայով, որը նվիրված էր չարորակ ուռուցքների առաջացման պատճառների և մեխանիզմի էքսպերիմենտալ հետազոտություններին և տեսական եզրակացություններին։

Բժշկական գիտությունների սեկցիայում հանդես եկան 12 ակադեմիկոսներ և թղթակից-անդամներ, մի շարք պրոֆեսորներ և դոցենտներ։ Ընդամենը կարդացվեց 18 զեկուցում։ Այստեղ գիտական մեծ արժեք են ներկայացնում ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ Խ. Ս. Կոշտոյանցի՝ «Նյարդային գործունեության բիմիական կողմի մասին», Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանի՝ «Հետազոտություններ ֆիզիոլոգիական ակտիվ միացությունների բնագավառում», ՍՍՌՄ Բժշկական ակադեմիայի թղթակից-անդամ Պ. Մ. Սարաջիշվիլու «Ուղեղի ցողունի ռետիկուլյար ֆորմացիայի մասին կոնցեպցիայի մի քանի կլինիկական հարցեր», Վրացական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Պ. Ա. Կոմնտիանու «Առաջնային բիոբիմիական փոխարկումների մասին, որոնք կապված են մկանային հյուսվածքի գործունեության հետ», Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Հ. Խ. Բունիաթյանի՝ «Գամմա-ամինա-յուղաթթուն և նրա դերը կենդանիների օրգանիզմի նյութափոխանակության մեջ», Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Լ. Ա. Հովհաննիսյանի՝ «Միրտանոթային հիվանդությունների ժամանակ ներվա-հոգեկան սֆերայի խախտման մասին», Վրացական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Տատիշվիլու՝ «Չարորակ ուռուցքների մասին» և այլ զեկուցումները։ Նրանցում ցայտուն կերպով դրսևորվեցին այն հաջողությունները, որոնք ձեռք են բերվել Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի նուրբ օրգանական քիմիայի, Ֆիզիոլոգիայի, Ռենտգենոլոգիայի և օնկոլոգիայի ինստիտուտներում, Բիոքիմիայի և Ռադիոբիոլոգիայի սեկտորներում։

Կենսաբանական գիտությունների բնագավառում կարդացվեց ընդամենը 15 զեկուցում։ Այստեղ գիտական բազմակողմանի քննարկման մթնոլորտում անցան բիոլոգիական գիտությունների դոկտոր Վ. Հ. Ղազարյանի՝ «Բույսերի օնտոգենեզի որոշ հարցեր», Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Գ. Ս. Դավթյանի՝ «Բույսերի անհող կուլտուրայի պրոբլեմի մասին», ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ Ն. Ա. Կրասիլնիկովի՝ «Ժամանակակից պատկերացումը անտիբիոտիկների մասին և նրանց գործնական կիրառումը», Ղազախական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ռ. Ս. Շուլցի՝ «Հելմինտոզի ժամանակ առաջացող իմունոլոգիական որոշ երևույթների մասին», Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ս. Կ. Կարապետյանի՝ «Գյուղատնտեսական կենդանիների սեռի նպատակադիր փոփոխությունների հարցի շուրջը» և այլ թեմաներով զեկուցումները։

Տնտեսագիտական և փիլիսոփայական գիտությունների սեկցիայի նիստերը իրենց վրա էին բևեռել Հայաստանի տնտեսագետների, փիլիսոփաների, արդյունաբերության ու տրանսպորտի աշխատողների ուշադրությունը։ Այստեղ մեծ հետաքրքրություն առաջացրեց ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Տ. Ս. Խաչատուրովի զեկուցումը՝ «Կապիտալ ներդրումների տնտեսական էֆեկտիվությունը Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության մեջ» թեմայով։ Քննադատաբար գնահատելով կապիտալ ներդրումների որոշման գոյություն ունեցող մեթոդը, զեկուցողը մասնագետների ուշադրությունը հրավիրեց Հայկական ՍՍՌ-ում գոյություն ունեցող և գլխավոր հեռանկարային պլանով նախատեսվող կապիտալ ներդրումների չափերի և ազգային եկամտի միջև եղած հարաբերությունների բազմակողմանի ուսումնասիրման անհրաժեշտության վրա։ Նման հարցադրումը ռեսպուբլիկայի համար ունի կարևոր գործնական նշանակություն։

Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Ա. Առաբելյանի «Տեխնիկական ռեոլյուցիան կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակ» զեկուցման մեջ առաջին անգամ փորձ կատարվեց տալ ՍՍՌՄ-ում կոմունիստական հասարակության ծավալուն կառուցման ժամանակաշրջանում տեխնիկական ռեոլյուցիայի տրնտեսական էությունը։ Զեկուցման մեջ նոր հարց էր նաև արդյունաբերության, առաջին հերթին մեքենաշինական արդյունաբերության լրիվ ավտոմատացումը, այն առումով, որ ժողովրդական տնտեսության համար բոլոր մեքենաները արտադրվեն ավտոմատիկ մեքենաների օգնությամբ։ Այս, զեկուցողի կարծիքով, պետք է անդիսանա ժողովրդական տնտեսության գրքավոր պլանի առաջավոր օղակը։ Ա. Ա. Առաբելյանի առաջ քաշած հարցերը ունեն ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն։

զեկուցման մեջ կատարված առաջարկությունները ներկայացված են ռեսպուբլիկայի պլանավորող օրգաններին։

«Հայաստանի արդյունաբերության զարգացումը 40 տարում» թեմայով զեկուցման մեջ տնտեսագիտական գիտությունների թեկնածու Ա. Կ. Ջրաղացպանյանը ցույց տվեց այն խոշոր հաջողությունները, որոնք տեղի են ունեցել մեր ռեսպուբլիկայում 40 տարում, համոզիչ անալիզի հիման վրա դրսևորեց ժողովրդական տնտեսության առաջավոր ճյուղի՝ արդյունաբերության բնագավառում տեղի ունեցած արմատական առաջընթացը։ Որպես հարակից զեկուցող հանդես եկած տնտեսագիտական գիտությունների թեկնածու Կ. Խ. Վերմիշևը առանձնապես կանգ առավ ռեսպուբլիկայում Էներգետիկայի զարգացման հարցի վրա։

Ժողովրդական տնտեսության համար կարևոր տեսական և գործնական նշանակություն ունեցող հետաքրքիր զեկուցումներով հանդես եկան Եղբայրական Վրաստանի գիտնականները։ Լավ ընդունվեցին տնտեսագիտական գիտությունների թեկնածու Ա. Լ. Գունիայի՝ «Տնտեսական կապերը վրացական և հայկական վարչատնտեսական շրջանների միջև» և տնտեսագիտական գիտությունների թեկնածու Ռ. Գ. Գվելեսիանու՝ «Լեռնային շրջանների տնտեսական շրջանացման փորձը Վրացական ՍՍՌ օրինակով» զեկուցումները։

Փիլիսոփայության սեկցիայի գծով կարդացվեցին փիլիսոփայական գիտությունների թեկնածու Հ. Գ. Ասլանյանի՝ «Բուրժուական սոցիոլոգիայի քննադատությունը տեխնիկական պրոգրեսի հարցում», փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ս. Ս. Թովմասյանի՝ «Տեխնիկական պրոգրեսը և հասարակության սոցիալական կառուցվածքը կոմունիզմին անցնելու ժամանակաշրջանում» և պրոֆեսոր Յ. Ա. Ստեփանյանի՝ «ՍՍՌՄ-ում կոմունիզմի կառուցման ընդհանուր օրինաչափությունները և առանձնահատկությունները» զեկուցումները։

Պատմական գիտությունների սեկցիայում կարդացված զեկուցումներից հատկապես հիշատակության արժանի է ակադեմիկոս Ի. Ռ. Մինցի զեկուցումը՝ «Վ. Ի. Լենինը և Սովետական պետության շինարարությունը» թեմայով, որն աչքի էր ընկնում Սովետների, որպես պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձևի, ՍՍՌՄ-ի պետական կառուցվածքի, կապիտալիզմից կոմունիզմին անցնելու ժամանակաշրջանում առաջացող այլ քաղաքական կարգերի բազմաձևության մասին հարցերի կոնկրետ և խոր վերլուծմամբ։ Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ջ. Ի. Իրտիմովը «Անդրկովկասի աշխատավորության ինտերնացիոնալ համախմբումը և մարտական համագործակցությունը Սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում» թեմայով զեկուցման մեջ միանգամայն ճիշտ նշեց, որ ցարիզմի և կապիտալիստական-կալվածատիրական շահագործման դեմ Անդրկովկասի աշխատավորության համատեղ պայքարին և համախմբմանը արգելակել են բուրժուանացիոնալիստական պարտիաները, հոսանքները, խմբերը՝ պանիսլամիստները, մուսավաթականները, դաշնակները, վրացական մենշևիկները ու ֆեդերալիստները։ Ցույց տրվեց Կոմունիստական պարտիայի հետևողական աշխատանքը Անդրկովկասի ժողովուրդների ինտերնացիոնալ դաստիարակության, տիրող կարգերի դեմ համատեղ պայքարի համար համախմբման ուղղությամբ։ Անդրկովկասյան ժողովուրդների դարավոր բարեկամությանն էին նվիրված նաև պատմական գիտությունների թեկնածու Ն. Ի. Ստուրուայի՝ «Անդրկովկասյան ժողովուրդների բարեկամության պատմությունից», պատմական գիտությունների թեկնածու Գ. Ա. Մադաթովի՝ «Անդրկովկասի մարտիկների համատեղ պայքարը ֆաշիստական զավթիչների դեմ Հայրենական պատերազմի տարիներին», պատմական գիտությունների թեկնածու Հ. Ե. Եղանյանի՝ «Սովետական իշխանության հաստատումը Անդրկովկասում և ազգային-պատագրական շարժումները Մերձավոր Արևելքում» զեկուցումները։ Հայաստանում Սովետական իշխանության հաղթանակին և Կոմունիստական պարտիայի կազմավորմանն էին նվիրված պատմական գիտությունների դոկտորներ Ա. Ռ. Հարությունյանի, Ա. Ն. Մնացականյանի, պատմական գիտությունների թեկնածուներ Վ. Ա. Ավետիսյանի, Խ. Հ. Բարսեղյանի, Ա. Մ. Էլչիբեկյանի զեկուցումները։

Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Մ. Պ. Ադայանի զեկուցումը նվիրված էր «Սովետական Հայաստանի տնտեսական և կուլտուրական շինարարության պատմությունից» թեմային։ Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Ս. Սումբաթ Զադեն զեկուցում կարդաց «Ադրբեջանում և Հայաստանում 1870 թ. գյուղացիական ռեֆորմի պատմական նշանակության գնահատման հարցի շուրջը» թեմայով։ Աշխույժ դիսկուսիա առաջացավ ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ Մ. Ն. Կիմի՝ «Ազգային հարցը կոմունիստական շինարարության մեջ» թեմայով զեկուցման շուրջը։

Հայաստանի հնագիտական հետազոտությունների նվաճումները շարադրված էին Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Բ. Բ. Պիոտ-

յովսկու, պատմական գիտությունների դոկտորներ Կ. Գ. Ղաֆադարյանի և Բ. Ն. Առաքելյանի զեկուցումներում։ Հետաքրքիր էր նաև պատմական գիտությունների դոկտոր Ա. Մ. Ապակիձեի զեկուցումը՝ «Անտիկ Վրաստանի հնագիտական հուշարձանների ուսումնասիրման մի քանի արդյունքները» թեմայով։

Հետաքրքիր անցան նաև լեզվի և գրականության սեկցիայի աշխատանքները։ Այստեղ առանձնապես պետք է նշել ՍՍՌՄ ԳԱ թղթակից անդամ Ի. Ի. Ակինիմովի՝ «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և համաշխարհային գրականությունը», Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Բ. Կարինյանի՝ «Գրականագիտությունը Սովետական Հայաստանում», ակադեմիկոս Վ. Վ. Վինոգրադովի՝ «Հեղինակի և ոճի հասկացողությունը որպես պատմական կատեգորիա գրականության զարգացման մեջ» զեկուցումները, Ա. Ս. Ղարիբյանի զեկուցումը «Բարբառագիտության նվաճումները և հեռանկարները Սովետական Հայաստանում», Վրացական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Գ. Ն. Լեոնիձեի՝ «Վրաստանի և Հայաստանի գրական փոխհարաբերությունների պատմությունից», Վրացական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ի. Վ. Աբուլադզեի՝ «Հին հայերեն և վրացերեն լեզուների մի քանի ընդհանուր բառեր» և այլ զեկուցումներ։

Պատմության, տնտեսագիտության և փիլիսոփայության, լեզվի ու գրականության սեկցիաներում կարդացված զեկուցումները ցույց տվեցին այն շրջադարձը, որը կատարվել է ՍՄԿՊ Կենտկոմի 1960 թ. հունվարի 9-ի՝ «Արդի պայմաններում պարտիական պրոպագանդայի խնդիրների մասին» որոշումից հետո դեպի սովետական հասարակության զարգացման պրոբլեմների և սովետական շրջանի պատմության, գրականության, լեզվաբանության հարցերի ուսումնասիրությունը։ Առաջնորդվելով մարքսիզմ-լենինիզմի ուսմունքով, Ակադեմիայի գիտական կոլեկտիվները կենդանի իրականության խոր ուսումնասիրման ու վերլուծության հիման վրա գիտականորեն ընդհանրացնում են սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման համար սովետական ժողովրդի պայքարի պատմական փորձը, նպաստում կոմունիզմ կառուցող մարդու դաստիարակման գործին։

ՍՍՌՄ, Հայկական, Վրացական և Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիաների համատեղ գիտական սեսիան ցույց տվեց աշխարհի ամենաառաջավոր սովետական գիտության ստեղծագործական հսկայական աճն ու հնարավորությունները և նրա վիթխարի դերը ՍՍՌՄ-ում կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման գործում, էլ ավելի ամրապնդեց մեր բազմազգ ժողովուրդների գիտնականների բարեկամությունը։

Սեսիայի մասնակիցների համար կազմակերպվեցին մի շարք էքսկուրսիաներ դեպի Կարմիր-բլուր, Էջմիածին, Գառնի և Գեղարդ, Բյուրական և այլ տեսարժան վայրեր։ Սեսիայի նիստերին մասնակցելուց բացի երկրի առաջատար գիտնականները ծանոթացան Հայկական ՍՍՌ ԳԱ հիմնարկների հետ, տվեցին կոնսուլտացիաներ և գործնական օգնություն՝ նրանց աշխատանքի հետագա կազմակերպման գործում։

Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԼԵՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

(Մենդլան 70-ամյակի առիթով)

Այս տարի գիտական հասարակայնությունը նշում է մեր մտավորականության փայլուն ներկայացուցիչներից մեկի, հայկական մշակույթի անխոնջ մշակի, ականավոր հայագետ-կովկասագետ Լեոն Մելիքսեթի Մելիքսեթ-Բեկի ծննդյան 70-րդ և գիտական-հասարակական բեղմնավոր գործունեության 50-րդ տարելիցը։

Մեծ է հոբելյարի վաստակը մեր ժողովրդի կուլտուրայի ու գիտության առաջ պատմագրության, գրականագիտության, լեզվագիտության, հնագիտության և մյուս հումանիտար գիտությունների զարգացման գործում։ Չի կարելի առանց զարմանքի ու հիացմունքի թերթել նրա կյանքի տարեգրությունը, չի կարելի չհիանալ այն բացառիկ ու վարակիչ եռանդով, որն ուղեկցել է հոբելյարին և մինչև այժմ էլ ուղեկցում է նրան կյանքի երկար ու դժվար ճանապարհներին։

Դեռևս ուսանողական տարիներին Լ. Մելիքսեթ-Բեկը համարձակորեն ոտք է դնում գիտության բնագավառը, ցուցաբերելով իր անհանգիստ բնավորությունն ու բազմապիսի հետաքրքրություններին այնքան համապատասխան հախուռն գործունեություն։ Օգեսայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ուսանող և նույն համալսարանի պատմա-բանասիրական

ֆակուլտետի ազատ ունկնդիր Լ. Մելիքսեթ-Բեկը չի սահմանափակվում գրականության տված և իր պրոֆեսորների հաղորդած գիտելիքների յուրացումով։ Նա ձգտում է տեսնել, հասկանալ, զգալ իր ժողովրդի •միջավայրը,

նրա ներկան ու անցյալը իրենց խոսուն վկաներով՝ պատմական հուշարձաններով, գրավոր աղբյուրներով, հնագիտական նյութերով, հայ գաղթավայրերի տնտեսական ու կուլտուրական կյանքի անմիջական ընկալումներով։

Եվ ահա Մելիքսեթ-Բեկը անպագրում շրջագայում է, մեկնում Բեսարաբիայի, Ուկրաինայի ու Ղրիմի բազաքներն ու գյուղերը, մասնակցում հնագիտական պեղումներին Այսրոդկա-Ռումանովկայում, Խերսոնեսում, Օլբիայում, Աբիսգիայում։ 1909—1913 թթ. ընթացքում մամուլում հրատարակած նրա տասնյակ հոդվածներին, ֆելիետոններին ու թարգմանություններին հետևում են 1911—1913 թթ. հրապարակած գիտական հաղորդումներն ու հետազոտությունները՝ «Նյութեր Ռուսիայի հարավում բնակված հայերի պատմության համար», «Հին հայկական արձանագրություններ Օդեսայի «Պատմության ու հնությունների ընկերության» թանգարանում», «Օդեսայում հայտարերված շարականի XV դարի ձեռագիրը», «Հայ մշակույթի մեծ տոնը» (հայկական գրերի գյուտի 1500-ամյակի առիթով), «Հարեթարանական տեսություն լեզվագիտության մեջ», «Երմոլովը էջմիածնում», «Մենգրելների ծագման հարցի շուրջը», «Բարոնները հայերի մոտ» (ռուսերեն) և տասնյակ ուրիշներ։ Միայն 1913 թ. բանեբերամյա երիտասարդ գիտնականը հրատարակում է 36, իսկ 1914 թ.՝ 39 հոդված։ Այսպիսին էր եռանդուն հայագետի շոնգալից մուտքը գիտության ասպարեզ։

Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի և ազգամիջյան կռիվների տարիներին, երբ բուրժուական նացիոնալիստական պարտիաները, շովինիզմի տենդով բռնված, ազգամիջյան թշնամություն էին սերմանում, Լ. Մելիքսեթ-Բեկը համարձակորեն հանդես էր գալիս որպես Ռուսաստանի ու Անդրկովկասի ժողովուրդների եղբայրության եռանդուն պրոպագանդիստ, բացատրում էր ազգերի համերաշխության մեծ ու բարերար նշանակությունը աշխատավորության համար, օգնում հայերի ու վրացիների և մյուս ժողովուրդների ազգային ինքնաճանաչման, փոխըմբռնման ու բարեկամության ամրապնդման գործին։ Այդ են վկայում նրա բազմաթիվ ուսումնասիրությունները։ Դրանցից հիշատակենք միայն մի քանիսը, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով արտահայտում են հեղինակի ջերմ հարգանքն ու խորին հետաքրքրությունը տարբեր ժողովուրդների և նրանց մշակույթի նկատմամբ և բացահայտում գիտնականի նպատակները ու միտումները։ «Նյութեր Ռուսիայի հարավի հայության պատմության համար», «Գերմանացի գաղութականները Կովկասում», «Նյութեր ռուս գրողների Կովկասին ու նրա բնակիչներին նվիրված գեղարվեստական երկերի բիբլիոգրաֆիայի համար», «Հայագետ Մակլերի աշխատությունները», «Ուկրաինական դերասան ու դրամատուրգ Մ. Լ. Կրոպիվնիցկին հայ երաժշտության ասպարեզում» (1914—1917), «IX—X դարերի հայ-վրացական կուլտուրական փոխհարաբերությունների պատմությունից» (1918), «Ողջույն, վրացական alma mater» (1919), «Պրոֆեսոր Կիպշիձեի հիշատակին» (1919), «Ռուսական կուլտուրական գիտական հիմնարկների բախտը Վրաստանում» (1921), «Հայերը վրացական հին գրականության մեջ» (1921, ռուսերեն)։

Ողջունելով սովետական կարգերի հաստատումը Անդրկովկասում, Լեոն Մելիքսեթ-Բեկը մեծ ոգևորությամբ լծվում է երիտասարդ Վրացական ռեսպուբլիկայի կուլտուրական շինարարության գործին, ծավալում իր հայագիտական աշխատանքը Վրաստանի դպրոցներում, բուհերում, գիտական ու կուլտուրական հիմնարկներում։ 1922 թ. նա բնակվում է Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտի հայոց լեզվի ու գրականության ամբիոնի դոցենտ։ Նորից ու նորից տրապարակվում են նրա անընդմեջ հետազոտու-

թյունները՝ «Վրաստանի առաջին գիտական արշավախումբը Հայաստանում», «Վրաստանի ուսումնասիրության մասին», «Թիֆլիսի հայկական բարբառը և նրա փոխհարաբերությունը վրացերենի հետ», «Վրացական գրատպագրության 300-ամյակի առթիվ» (ռուսերեն)։ 1928 թ. Լևոն Մելիքսեթ-Բեկը հրատարակում է տարիների ընթացքում կատարած իր ուսումնասիրություններն ընդհանրացնող աշխատությունը՝ «Հյուսիսային երկրների հայկական գիտնականները և հայ-վրացական փոխհարաբերությունների հարցերը։ Պատմագրական ուսումնասիրության փորձ» (ռուսերեն), ներկայացնում է Թբիլիսիի համալսարան և պաշտպանում որպես դոկտորական դիսերտացիա։

1930 թ. դոկտոր-պրոֆեսոր Լևոն Մելիքսեթ-Բեկը նշանակվում է նույն համալսարանի արևելյան լեզուների ու գրականության ամբիոնի վարիչ, իսկ 1935 թ. գլխավորում է հայագիտական ամբիոնը, միաժամանակ աշխատակցելով Վրաստանի ու Հայաստանի զանազան գիտական և ուսումնական հիմնարկներին։ Նրան մենք տեսնում ենք հայ, վրաց և աղրբեջանական ժողովուրդների պատմության, գրականության, լեզվի, աղբյուրագիտության և այլ առարկաների դասախոսի դերում Թբիլիսիի, Բաքվի, Երևանի համալսարաններում, Թբիլիսիի, Քութայիսիի, Գորիի մանկավարժական և ուսուցչական ինստիտուտներում, Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Կովկասագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում, Անդրկովկասի Կոմունիստական համալսարանում, Կովկասյան բանակի ռազմա-քաղաքական դրպրոցում։

Մեր մեծարգո հորելյարը աշխատակցել և աշխատակցում է ՍՍՌՄ-ի և մասնավորապես Անդրկովկասի բոլոր կովկասագիտական-հայագիտական վրացագիտական հիմնարկներին, հանդես է եկել գիտական սեսիաներում, պարբերականներում, ժողովածուներում։ Նա սերտորեն կապված է արխիվների, թանգարանների, գրադարանների, գիտական ընկերությունների հետ, օգնում է նրանց աշխատանքներում, բարձրացնելով գիտական հետազոտությունների, նյութերի հավաքման, ուսումնասիրության ու ցուցադրման նորանոր հարցեր։ Լ. Մելիքսեթ-Բեկի ստեղծագործական եռանդը, հանրագիտակ խոր պատրաստությունը, իր խորհուրդներով բոլորին և ամեն հարցում օգնելու պատրաստակամությունը՝ ոչ Անդրկովկասում ընդհանուր ճանաչում են գտել։ Եվ այդ չի խանգարել, այլ օգնել է նրա ստեղծագործական աճին նաև կյանքի երկրորդ դարակեսին։

1940—1960-ական թթ. եղան մեծանուն գիտնականի նորանոր հաջողությունների տարիներ, երբ ընդլայնելով ուսումնասիրությունների շրջանակները նա հրատարակում էր արժեքավոր աշխատություններ հայագիտության ու վրացագիտության ամենատարբեր բնագավառների վերաբերյալ, հրապարակում նորահայտ նյութեր՝ մտցնելով դրանք գիտական շրջանառության մեջ։

Մեծ է պրոֆեսոր Լ. Մելիքսեթ-Բեկի ծառայությունը նաև աղբյուրագիտության ասպարեզում. չանդրադառնալով նրա բազմաթիվ հրապարակած փաստաթղթերին, նշենք միայն «Վրացական պատմության գրավոր աղբյուրները» (հատ. 1), «Թովմա Մեծոփեցին Վրաստանի մասին» և «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» բառահատոր ժողովածուն (հրատարակված են I, II և III հատորները), որում ամփոփված են բազմաթիվ ու բազմապիսի սկզբնաղբյուրներ մեր պատմության ուսումնասիրության համար, որոնք մեծապես օգնում են հայ ընթերցողներին և ուսումնասիրողներին։

Ուշագրավ է պրոֆեսոր Լ. Մելիքսեթ-Բեկի վաստակը ինչպես Անդրկովկասի ժողովուրդների փոխհարաբերությունների ու բարեկամության, այնպես էլ նրանց ու ռուսների, ուկրաինացիների և մյուս ազգերի հետ պատմական կապերի ուսումնասիրության հետաքրքիր ու շնորհակալ գործում։ Բազմաթիվ են նրա հոդվածներն այդ հարցի մասին։ Ինչպես մյուս, այնպես էլ այս բնագավառում նրա կատարած մանր ու խոշոր հետազոտությունները պսակվել են ընդհանրացնող մենագրություններով։ Այսպես, «Հին Ռուսիան և հայերը» (ռուսերեն) աշխատությունը իր տեսակի մեջ ամենից ավելի ուշագրավ և ծավալուն ուսումնասիրությունն է, որից արդեն օգտվում են բազմաթիվ գիտնականներ։ Ինչպես իր բոլոր երկերում, այստեղ էլ հորելյարը հանդես է գալիս ժողովուրդների բարեկամության ջատագովի դերում, թեպետ ոմի տեղ չի օգտագործում այդ արտահայտությունը, բայց գիտենալով, որ իր հավաքած փաստերը իրենց պերճախոս լեզվով կպատմեն ժողովուրդների եղբայրության պատմական նշանակության ու պրոգրեսիվ դերի մասին։

Ինչպես շատ դիպուկ կերպով նշել է հորելյարի կենսագիրը՝ վրաց գիտնական Ի. Ի. Շիլակաձեն, Լևոն Մելիքսեթ-Բեկը համակովկասյան մասշտաբի բեղմնավոր գիտնական է[1]։

[1] Տե՛ս И. И. Шилакадзе, Леон Меликсетбекович Меликсет-Бек, Жизнь и деятельность. Полная библиография печатных работ Л. Меликсет-Бека, за 1901—1960 гг., գրքի առաջաբան, Тбилиси, 1960, էջ 7։

Հատկանշական է, որ պրոֆեսոր Լ. Մելիքսեթ-Բեկը լրջորեն զբաղվել է կովկասագիտության, հայագիտության ու վրացագիտության բոլոր հարցերով և ամենուրեք ասել իր խոսքը։ Այսպես, բազմաթիվ հետազոտություններից հետո նա 1941 թ. գրեց հին հայկական գրականության դասագիրք բուհերի համար, որը խոշոր երևույթ էր իր ժամանակի համար, երբ դեռևս չկային կոլեկտիվ ուժերով ստեղծված ժամանակակից մարքսիստական դասագրքերն ու ձեռնարկները։ Հանրաճանաչ է լեզվի, գրականության, հնագիտության, ազգագրության, իրավունքի և այլ հարցերի վերաբերյալ հոբելյարի գրած աշխատությունների արժեքը։ Մեծ է նաև վրացերենից ու ռուսերենից՝ հայերեն, հայերենից ու վրացիներից՝ ռուսերեն և վերջապես ռուսերենից ու հայերենից՝ վրացերեն կատարած նրա թարգմանությունների նշանակությունը. գործեր, որոնք ծառայել են նույն վսեմ նպատակին՝ ժողովուրդների փոխադարձ ճանաչմանը, ըմբռնմանը ու բարեկամության ամրապնդմանը։

Եվ բազմավաստակ գիտնական-գործչի 70-ամյակի օրը մենք կարող ենք հանգիստ խղճով ասել, որ Լևոն Մելիքսեթ-Բեկի 600 տպագիր աշխատությունները՝ սկսած թերթային հոդվածներից մինչև ծավալուն մենագրությունները, ուղղված են բուրժուա-նացիոնալիստական պատմագրության դեմ, հետապնդում են իսկական գիտության և ժողովուրդների բարեկամության շահերը։ Այս են վկայում «Նիկ. Բարաթաշվիլին և հայկական պոեզիան», «Ա. Մերենթելին և հայերը», «Ա. Մերենթելու «Բաշի-աչուկ»-ը և հայ մատենագրությունը» (հայերեն), «Մասունցի Դավիթ»-ը վրացերեն լեզվով» (վրացերեն) «Վ. Աղայանը և Յակ. Գոգեբաշվիլին» (հայերեն) «Դ. Սունդուկյանն ու վրացական թատրոնը» (վրացերեն), «Ակակի Մերենթելու երկերի թարգմանությունը հայերեն լեզվով» (վրացերեն), «Ակակի Մերենթելու Գ. Սունդուկյանին նվիրված բանաստեղծությունները» (հայերեն) և այլն։ Հիշված հոդվածների բնույթն ու լեզուն ակնհայտ են դարձնում հեղինակի միտումը՝ սգնել ժողովուրդների փոխադարձ ըմբռնմանն ու հարգանքին։

«Եթե մենք փորձենք,— գրում է Ի. Ի. Շիլակաձեն,— հակիրճ բնութագրել պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի հիսունամյա գործունեությունը, պետք է ասենք. դա անձնազոհ գործունեություն է՝ հանուն ժողովուրդների եղբայրական համերաշխության ամրապնդման, քանի որ նրա յուրաքանչյուր աշխատություն՝ մեծ թե փոքր, անգամ սովորական լրագրային հոդվածը ծառայում է այդ ազնիվ գործին։ Առանձնապես նշանակալի է պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի գործունեությունը վրաց, հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամության պատմական արմատների բացահայտման ուղղությամբ։ Եվ մենք կդժվարանայինք նշել երկրորդ գործչի, որն այս ուղղությամբ այդքան շատ բան է արել»[1]։

Անգնահատելի է պրոֆեսոր Լ. Մելիքսեթ-Բեկի դերը նաև մանկավարժական աշխատանքի ու կադրերի պատրաստման բնագավառում։ Կես դար շարունակ նա հայագիտության ու կովկասագիտության իր անսահման գիտելիքները հաղորդել է տասնյակ հազարավոր աշակերտների, ուսանողների, ասպիրանտների, արթնացնելով նրանց մեջ հետաքրքրություն իրենց երկրի ու ժողովրդի պատմության, լեզվի, գրականության, արվեստի, ճարտարապետության նկատմամբ։ Լ. Մելիքսեթ-Բեկը եղել է և մնում է երիտասարդ գիտական աշխատողների լավագույն ու սրտացավ բարեկամը, ուսուցիչն ու խորհրդատուն, ղեկավարն ու դաստիարակը։ Նա ցուցաբերել է մշտական պատրաստակամություն կարդալ, գրախոսել, խմբագրել իրեն հանձնված աշխատությունները։ Նա ավելի քան 60 անգամ հանդես է եկել որպես պաշտոնական օպոնենտ, գրախոսելով այնպիսի ականավոր գիտնականների դոկտորական դիսերտացիաներ, ինչպիսիք են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ա. Բ. Կարինյանը, Ա. Գ. Հովհաննիսյանը, Մ. Գ. Ներսիսյանը, Ա. Ս. Զարիբյանը, Վրաստանի գիտնականներ Յա. Զ. Յինցաձեն, Ի. Վ. Աբուլաձեն, Գ. Գոգալիշվիլին, Շ. Կ. Չխեթիան, Մ. Ի. Չիկովանին և ուրիշներ։

Այսօր էլ այդ հասուն, բայց հավերժ երիտասարդ դիտնականը շարունակում է իր եռանդուն կյանքն ու գործը, նորանոր թեմաներով հանդես է գալիս Մոսկվայում, Բաքվում, Թբիլիսիում, Տաշքենդում, Երևանում և այլուր կազմակերպվող գիտական սեսիաներում ու կոնդրեսներում, շրջագայում քաղաքից-քաղաք, գյուղից-գյուղ, նորից ու նորից դիտում պատմական հուշարձանները, հավաքում նյութեր ու փաստեր։

Լևոն Մելիքսեթ-Բեկի էներգիան և ժամանակը ինչ-որ ձևով բավականացնում է, բավարարում ամեն ինչի ու բոլորին։ Նա միշտ եղել է և է բազմաթիվ ինստիտուտների, թանգարանների, արխիվների գիտական ընկերությունների խորհուրդների անդամ, Վրաստանի սովետական գրողների և ճարտարապետների միությունների անդամ ու վերջապես Վրաստանի Պետական հանրային գրադարանի պատվավոր անդամ։

[1] Տե՛ս И. И. Шилакадзе, նշվ. աշխ. էջ 7—8։

Լ. Մելիքսեթ-Բեկը նրանց բոլորին պետք է, օգտակար՝ իր անկրկնելի համայնապարփակ պատմագիտական տեղեկություններով, իր անանման բիբլիոգրաֆիայով։

Թվում է, որ անծայր ու անսպառ են մեր թանկագին հորելյարի ուժերն ու կարողությունները, կարծես նա չի հոգնում և կարիք չունի հանգստանալու։ Եվ իսկապես, նա իր հանգիստը գտնում է ոչ թե սանատորիաներում, այլ ճանապարհորդությունների մեջ՝ երբ կարող է նորից ու նորից դիտել ու քննել իր այնքան սիրած հայրենիքը։

Հաշվի առնելով պրոֆ. Մելիքսեթ-Բեկի մեծ ծառայությունները գիտության ասպարեզում, Սովետական Վրաստանի կառավարությունը դեռևս 1941 թ. Վրաստանում սովետական կարգերի հաստատման քսանամյակին նրան շնորհել է գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում։ 1945 թ. օգոստոսին վաստակավոր գիտնականն ընտրվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ։

Իր կյանքի 70-րդ տարում պրոֆեսոր Լ. Մելիքսեթ-Բեկը դարձյալ շարունակում է կենսագործել իր անսպառ ստեղծագործական պլանները ի փառս սովետական գիտության։

Մեր սիրելի մեծարգո հորելյարին ցանկանանք բարեառողջություն և նորանոր հաջողություններ նրա գիտական գործունեության երկրորդ հիսնամյակում։

Վ. ՈՍԿԱՆՅԱՆ